Սորա մերձ մի վայր կերևի հին փլած կամուրջի մի նշխարներ, որ քրդեր Փրէ-Պասեան (Ձկան կամուրջ) կասեն նոյն անուամբ գիւղի մօտերն։

Զամբեանի և Այլրարատի մէջ Անգղի վերաբերմամբ գրուածներն այս տեղ կը ներկայացնեմ, որք և՛ թէև Անգղայ վայրին անծանօթ, ինչ որ գտած են պատմագրոց մէջ, որոց հետևած են, սակայն այդ գրուածներն և՛ ունին իւրեանց մէջ ապացոյցներ թէ Անգղն սակաւ ինչ յարմար կգայ լինելու յիշուած Ղարղալին և թէ Ծաղկոտն գաւառի մէջ լինելու է Անգղ։

«Իսկ սպարապետն Պարսից Նապատ որ բանակեալ էր մերձ ի գիւղաքաղաքն Անգղ, առեալ զլուր գալստեան յունաց, զահի հարաւ և ամապարեալ կարգեաց զզօրս իւր ի պատերազմ։»

«Զու արարեալ ամենայն բազմութիւն Հայոց ի տեղիս հովոց. զային հասանէին ի գաւառն, որ կոչի Ծաղկոտն, մերձ ի բերդն ամուր, զոր Անգղն անուանեն. զայն տեղօք արարեալ բանակետեղս իւրեանց, դադարէին անդ զաւուրս տօթոյն։»

«(ուր Վարդանանք) զայն տեղօք արարեալ բանակետեղս իւրեանց դադարէին անդ զաւուրս տօթոյն»։

«Եղիշէ գոչէ գիւղաքաղաք մեծ»։

«Ըստ Սեբէոսի էր առ Արածանի գետով . . . «Եւ զօրն Յունաց դումարեալ ի Ծաղկոտանն. մերձ ի գիւղն որ կոչի Անգղն, ընդ որ անցանէ Արածանի և ի միւս կողմանէ փակեալ զգեօղն ածին ամրութիւն շուրջ զինքեամբ։ Եւ Զօրագլուխն նոցա Թէոդոս Խոռխոռունի, և զօրն Պարսից եկեալ բանակեցան մերձ առնոսա ի Թիկանց կողմանէ. և նոքա զարհուրեալ խոսեցան ընդ նոսա ի խաղաղութիւն, ասացին ոչ ունել